ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ

ՀՐԱՄԱՆԸ

«25» նոյեմբերի 2014 թվականի № 287-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 27-Ի ԹԻՎ 185-Ա ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 2.1.-րդ հոդվածի 6-րդ մասով, «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 70-րդ հոդվածով և հիմք ընդունելով ՀՀ վարչապետի 2014 թվականի նոյեմբերի 19-ի թիվ 02/19/19412-14 համաձայնությունը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության աշխատակազմի ընդերքի պետական տեսչության 2014թ. տարեկան աշխատանքային ծրագրում՝ ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարի 2013 թվականի նոյեմբերի 27-ի թիվ 185-Ա հրամանին կից հավելվածում կատարել փոփոխություն՝ 15 տնտեսվարող սուբյեկտների մոտ 2015թ. ընթացքում իրականացվելիք ստուգումների մասով (հավելված N 1):

2. Հաստատել, ՀՀ վարչապետի հանձնարարությամբ, ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության աշխատակազմի ընդերքի պետական տեսչության կողմից 2015թ. ընթացքում իրականացվելիք 15 ընկերություններում ստուգումների ցանկը՝ համաձայն հավելված N 2-ի:

3. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության աշխատակազմի ղեկավարին:

ԵՐՎԱՆԴ ԶԱԽԱՐՅԱՆ